ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Կաղանդ և տարեմուտ 1958 թվականի։

Նոր տարվա տոնի կապակցությամբ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագից հետո նոր տարվա տոնի առիթով Վեհափառ Հայրապետը ընդունեց միաբանության, պաշտոնեության, Հոգևոր Ճեմարանի ուսանողության և պաշտոնական անձնավորությունների շնորհավորությունները։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Ճրագալույց Մննդեան և Աստուածայայտնութեան Քրիստոսի»։

Երեկոյան ժամերգության ժամանակ Մայր Տաճարում Հոգևոր Ճեմարանի ուսանողները ընթերցեցին Դանիելի գիրքը։

Օրվա տոնի առիթով պատարագեց և քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը՝ «Որդիք մարդկան, օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ» շարականի ընթերցանի վրա, ծանրանալով Քրիստոսի մարդեղության մեծ խորհրդի վրա, մարդկանց փրկագործության համար։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց նախատոնակ, հանդիսավոր ու ցնծագին հնչեց «Խորհուրդ մեծ և սքանչելի» Մննդյան շարականը՝ հոգիները լցնելով ուրախ ավետիքով։

Ճրագալույցի արարողությանց նախագահում էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի և նախատոնակի, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով և շարականով, առաջնորդվեց վանական սեղանատուն և բարեհաճեց սեղանակից լինել միաբանության և ուսանողության Ս. Մննդյան ավանդական ճաշին։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 7-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «յիշատակ մեռելոց»։

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաջիրյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ մեռելոց։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Հոգևոր Ճեմարանում վերսկսվեցին դասավանդությունները Ս. Մննդյան արձակուրդից հետո։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 12-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Մայր Աթոռի փոխ-լուսարարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը՝ «Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր ի քաղաքի Դաւթի» ընթերցանով (Ղուկ. Բ 11)։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 14-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «Տօն ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին»։

Օրվա մեծ սրբի տոնի առիթով Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում բանախոսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի տնօրեն, անվանի գիտնական պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը՝ «Լեզվի ծագումը» թեմայի շուրջ։

Դասախոսության ներկա էին ամբողջ միաբանությունը, Ճեմարանի ուսանողությունը և վանքի պաշտոնեությունը։

Հարգելի գիտնականը մոտ մեկ ժամ տևող իր շատ շահեկան բանախոսության մեջ հատկապես կանգ առավ հայոց լեզվի՝ որպես հնդեվրոպական մի առանձին և անկախ ճյուղի պատմության վրա։ Բանախոսության վերջում պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը սիրով պատասխանեց ունկնդիրների՝ դասախոսության հետ կապված մի շարք լեզվաբանական հարցերին։ Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Դասախոսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 19-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

«Հայր մեր»-ի ժամանակ Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը պաշտոնապես կարդաց ի լուր ժողովրդյան Վեհափառ Հայրապետի 1957 թվականի դեկտեմբերի 20 թվակիր հայրապետական սրբատառ կոնդակը՝ գրված Անթիլիասի ոտնձգությանց առթիվ։ Սրբազանը ապա քարոզեց՝ բացատրելով հայրապետական կոնդակի պատմական նշանակությունը։

Մայր Տաճարում հավաքված հավատացյալների բազմությունը խորունկ ուշադրությամբ և հուզմամբ լսում էր հայրապետական կոնդակի յուրաքանչյուր տողը և միտքը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Այսօր, Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով, մեր ներքին թեմերի բոլոր եկեղեցիներում ևս հանդիսավորապես կարդացվեց Վեհափառ Հայրապետի դեկտեմբերի 20 թվակիր սրբատառ կոնդակը՝ Անթիլիասի ոտնձգությանց մասին։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 23-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում, երեկոյան ժամը 4-ին, իր երկրորդ բանախոսությունը կարդաց պրոֆ.-դոկտ Ա. Ղարիբյանը՝ «Հայոց լեզվի բառակազմությունը և հիմնական բառային ֆոնդը» շատ հետաքրքիր և շահեկան թեմայի շուրջ, որը բոլոր ներկաների կողմից լսվեց հարաճուն հետաքրքրությամբ։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը՝ «Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։